ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն՝ Երաժշտության ուսուցչուհի

Թեմա՝ Երաժշտության դասավանդման մեթոդները

Կատարող՝ Մուրադյան Մարինե Սերգեյի

Ղեկավար՝ Մելիքսեթյան Գոհար
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Երևան 2022

Երաժշտության դասավանդման մեթոդները

«Եթե մանուկը չի հասկնար ձեր դասավանդությունը, հանցանքը ձերն է, որովհետև չեք կրցած հասկնալ անոր հոգին: Պետք է իջնել մինչև անոր հոգեկան աստիճանը և զայն առնելով ձեզի հետ՝ բարձրացնել»:

Կոմիտաս

Ինչպե՞ս իջնել, հավասարվել աշակերտի հոգեկան աստիճանին և ինչպե՞ս բարձրացնել, ի՞նչ, ինչպե՞ս սովորեցնել, բացատրել, որ ուսուցանվող նյութը լինի հասկանալի, որ չհիսաթափվի, չհուսալքվի աշակերտը, այլ սկսի հավատալ իր ուժերին, կարողություններին: Այստեղ մեզ օգնության կհասնեն դասավանդման կամ ուսուցման, մեթոդները, մեր առարկայի դեպքում՝ «Երաժշտության դասավանդման մեթոդները»:

«Մեթոդ»բառը հունարենից թարգմանված նշանակում է հետազոտման, ուսուցման ուղի, միջոց և մեկնաբանվում է որպես բնության, հասարակության, մտածողության երևույթների և օրինաչափությունների ուսուցման կանոնների ու գործունեության ձևերի համակարգ: [3.70]

Ուսուցման մեթոդը ուսումնական գործընթացի կազմակերպման ձև է, հասկիացությունն իր մեջ ներառում երեք խնդիր՝ ի՞նչ սովորեցնել, ի՞նչու սովորեցնել, ինչպե՞ս սովորեցնել:

Մեթոդի ընտրությունը պայմանավորված է մի քանի գործոններով աշակերտի գործունեության արդյունավետ կազմակերպմամբ, դասընթացի ուսուցման նպատակով, ուսումնական նյութի յուրահատկությամբ, աշակերտի հնարավորություններով, դասավանողի պատրաստվածությամբ և այլն:

Ուսուցման մեթոդի Ե. Գոլանտի կողմից առաջարկված դասավանդման հիմքում ընկած է սովորողների ակտիվ գորրծունեության մակարդակը, ուսումնական գործընթացում, սովորողների ակտիվ կամ պասիվ ընդգրկման աստիճանը: [3.71]

Ուսուցման կամ դասավանդման մեթոդները բաժանվում են երեք խմբի

1.Պասիվ մեթոդ կամ խոսքային –տեղեկատվական մեթոդ

2.Ակտիվ մեթոդ

3.Փոխներգործուն (Ինտերակտիվ) մեթոդ

Պասիվ մեթոդ

Պասիվ մեթոդի հիմքում ընկած է ուսուցչի խոսքը, այսինքն սա ուսուցչակենրոն դաս է:

Այստեղ աշակերտն ունկնդրողի և դիտողի դերում է: Մեթոդը հնարավորություն է տալիս ուսուցչին կարճ ժամանակահատվածում մեծածավալ նյութ հաղորդել, սակայն մատուցող նյութը դժվար ընկալելի է լինում աշակերտի համար:

Այս մեթոդի կիրառման ժամանակ աշակերտի ստեղծագործական ունակությունները չեն արտահայտվում՝

Սխեմա 1, Պասսիվ մեթոդ

Ակտիվ մեթոդ

Ակտիվ մեթոդը ուսուցչի և աշակերտի փոխազդեցության մի ձևվ է, այն հնարավորություն է տալիս ստղծագործելու, երևակայելու:

Այստեղ աշակերտը ոչ թե պասիվ ունկնդրող է, այլ դասի ակտիվ մասնակից:

Այս մեթոդի նպատակն է՝ բոլոր պրոցեսների (խոսքի, հիշողության, երևակայության) օգտագործումը գիտելիքների, հմտությունների յուրացման համար:

Սխեմա 2, Ակտիվ մեթոդ



Փոխներգործուն (ինտերակտիվ) մեթոդ

Փոխներգործել՝ նշանակում է գտնվել երկխոսության մեջ ոչ միայն ուսուցչի այլև մեկը մյուսի հետ:

Ինտերակտիվ ուսուցման ժամանակ ուսուցիչը նոր գտելիքներ փնտրելու հանձնարարությունը տալով

1.Բացատրում է աշխատանքի նպատակը

2.Ուղղորդում է

3.Բաժանում է աշակերտների խմբերի և տալիս է առաջադրանք

4. Հետևում է աշխատանքների ընթացքին

5. Օգնում է գալ ընդհանուր եզրակացության

Այստեղից բխում է, որ աշակերտը ոչ այնքան ամրապնդում է յուրացված նյութը, այլ ուսումնասիրում, իսկ ուսուցիչը կազմակերպում է ինքնուրույն աշխատանքը և ուղղորդում: Այս մեթոդի հիմքում ընկած է «Բոլորը հավասար են» սկզբունքը:

ԻՆՏԵՐԱՐԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐ

Ինտերակտիվ դասավանդման մեթոդները բաժանվում են 2 խմբի՝ իմիտացիոն և ոչ իմիտացիոն: Իմիտացիոն տեխնոլոգիաների հիմքում ընկած է իրական իրավիճակների գործնեության խնդիրների վերարտադրումը ուսումնական պրոցեսի ընթացքում: Ոչ իմիտացիոն մեթոդները բնութագրվում են ուսումնասիրվող գործընթացի մոդելի բացակայությամբ, հարց-պատասխան հաղորդակցությամբ: Ոչ իմիտացիոն մեթոդներից են՝ դասախոսությունը, սեմինարը: Իմիտացիոն մեթոդները բաժանվում են խաղային և ոչ խաղային:

Ինտերակտիվ մեթոդները կիրառվում են և՛ դասի և՛ գործնական պարապունքի ժամանակ:

Սխեմա 3, Ինտերակտիվ մեթոդ



Երաժշտական մի շարք մեթոդների մշակման համար, որոնք ուղղված են երաժշտության գիտակցական ընկալմանը Կաբալևսկու հայեցակարգի ստեղծումը կարևոր գործոն դարձավ: [3.74]

Այսպիսով՝ երաժշտության ուսուցման գործընթացում մշակվեցին հետևյալ մեթոդները

Երաժշտության մասին մտորելու մեթոդ

Այս մեթոդի միջոցով աշակերտը յուրացնում է ոչ թե պատրաստի գիտելիքը, այլ ուսուցչի կողմից առաջադրված խնդիրը, որը պետք ինքնուրույն լուծի: Դ. Կաբալևսկի այսպես է մեկնաբանում էությունը «Շատ կարևոր է, որ նոր հարցերի լուծումը իրականանա ուսուցչի և սովորողի միջև տեղի ունեցող կարճ հարցազրույցի միջոցով, յուրաքանչյուր այդպիսի հարցազրույցի ժամանակ պետք է առկա լինի երեք հիմնական գործոն՝

1.Ուսուցչի կողմից ճշգրիտ ձևակերպված խնդիր

2.Այդ խնդրի աստիճանաբար լուծում սովորողի հետ համատեղ

3 .Վերջնական եզրակացություն, որը պետք է ձևակպվի սովորողի կողմից» [3.74]

Համեմատությունների և ընդհանրացման մեթոդ

Համեմատություն կատարլով և եզրահանգման գալով՝ երաժշտության հնչողության (մեղմ-ուժեղ) ինտոնացիայի (բարձր-ցածր), բնույթի (ուրախ-տխուր) մասին՝ աշակերտն ավելի ակտիվ և գիտակցաբար է ընկալում երաժշտությունը:

Երաժշտական արտահայտչամիջոցները համեմատելով կյանքի այս կամ այն երևույթի հետ. օրինակ՝ երաժշտության զարկերը համեմատում է մարդու զարկերակի, սրտի բաբախումի հետ, երկար և կարճ տևողությունները՝ քայլելու և վազելու արագության հետ:

Կարևոր նշանակություն ունի նաև **նոր նյութի ծանոթացման և հնի կրկնության մեթոդը**:

Օգտակար է երբեմն թեմայից առաջ անցնել, ստուգելու, թե աշակերտը որքանով է պատրաստ նոր նյութի ընկալմանը: Բազմիցս վերադառնալով անցածին՝ ուսուցիչը ոչ միայն ամրացնում է անցած գիտելիքները, այլև ամեն անգամ նորովի անդրադառնում հնին՝ աշակերտի ուշադրություն հրավիրլով ծանոթ երաժշտության նոր, դեռ չդիտարկված կողմերին: [1. 4]

ՆԱԽԱՊԵՍ ՊԼԱՆԱՎՈՐՎԱԾ ՍԽԱԼՆԵՐՈՎ ԴԱՍԻ ՄԵԹՈԴ

Այս մեթոդը թույլ է տալիս տարբեր մասնագիտական իրավիճակներում վերլուծական կարողություն, սովորեցնում է առանձնացնել սխալ ինֆորմացիան: Դասին հայտարարվում է հաջորդ դասի թեման և զգուշացվում, որ դասախոսությունը կընդգրկի որոշակի սխալներ, որոնք ուսանողները պետք է գտնեն: Դասախոսության վերջում մասնակիցները բարձրաձայնում են սխալները և նշվում են ճիշտ պատասխանները: Այսպիսի դասախոսությունը նպատակահարմար է անցկացնել որպես թեմայի ամփոփում:Իբրև ելանյութ կարող են ծառայել բժշկական սխալները, հնացած, սխալ գիտական պատկերացումները:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՖԻԼՄԵՐԻ ԴԻՏՈՒՄՆԵՐԻ ՄԵԹՈԴ

Ուսուցողական վիդիոֆիլմերը կարելի է կիրառել համապատասխան թեմայի ուսուցման ժամանակ: Ֆիլմի դիտումից առաջ ուսուցիչը պետք է աշակերտներին առաջադրի մի քանի հիմնական հարց, որոնք հիմք կծառայեն հետագա քննարկմանը: Կարելի է ֆիլմը կանգնեցնել նախապես որոշված պահերին և կազմակերպել քննարկում: Դասի վերջում ամփոփել և բարձրաձայնել եզրակացությունները:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽԱՂԻ ՄԵԹՈԴ

Խաղային իմիտացիոն ուսուցման մեթոդներից է:

Սա ապագա վերարտադրում է, մասնագիտական գործունեության փորձ է: Այն թույլ է տալիս վերարտադրել կոնկրետ իրավիճակներ: Այս մեթոդը պահանջում է աշակերտների պատրաստվածություն և կոլեկտիվ աշխատելու կարողություն: Յուրաքանչյուրը լուծում է իր ֆունկցիաներին և դերակատարությանը համապատասխան խնդիրը: Գործնական խաղը սովորեցնում է համագործակցման հմտությունների: ՈՒսուցման պրոցեսը մաքսիմալ նմանեցվում է իրական գործնեությանը: Ստացված տեսական գիտելիքները փոխանցվում են գործնականի:

ԸՆԴՀԱՆՐԱՑՄԱՆ ՄԵԹՈԴ

Կիրառվող մեթոդի նպատակն է ընկալման միջոցով երաժշտության այս կամ այն օրինաչափությունը աշակերտի գիտակցությանը հասցնել հենվելով նրա

երաժշտական և կյանքի փորձի վրա: Այս մեթոդի կիրառումը զարգացնում է երեխայի ընկալումը և մտածողությունը, տրամաբանությունը, երաժշտությամ մեջ ինքնուրույն կողմնորոշվելու ընդունակությունը: [2.40]

ԱՌԱՋ ԳՆԱԼՈՒ և ՀԵՏ ԴԱՌՆԱԼՈՒ ՄԵԹՈԴ

Մեթոդի հեղինակն է Դ. Կաբալևսկին, հայտնի է նաև, որպես Աբդուլինի ,,երաժշտական կրթության գործընթացում հեռանկարների և հետադարձման մեթոդ: Այն թույլ է տալիս տարբեր կապեր ստեղծել ծրագրի թեմաների, երաժշտական ստսղծագործությունների միջև՝ նպաստելով երաժշտության մասին դպրոցականների ամբողջական պատկերացումների ձևավորմանը, այս կամ այն թեմայի կամ արվեստի ստեղծագործության առավել խորը ձևավորմանը: Մեթոդի առավելությունը այն է, որ արդեն ծանոթ նյութի հիման վրա նոր թեմայի յուրացումը ավելի դյուրին է դառնում, անցած թեմաները՝ նոր նյութի զուգորդմամբ դիտարկվում է ավելի բարձր մակարդակով:

Ժամանակակից ուսուցման մեթոդներ

ԽԻԿ եռափող համակարգ

Ժամանակակից կրթակարգի մեջ տեղ գտած բազմաթիվ մեթոդների մեջ իր անփոխարինելի տեղն ունի ԽԻԿ համակարգը, որը հստակորեն լուսաբանում է ողջ դասապրոցեսի անցկացման արդյու-նավետության աստիճանը: Այն իր մեջ ներառում է իրար հետ սերտորեն կապված երեք փուլեր՝ խթա- նում, իմաստավորում, կշռադատում: Խթանման փուլի հիմնական առանձնահատկություններից են՝
1. Նախապատրաստել սովորողներին նոր դասի ընկալմանը. Դա կարելի է կատարել նախորդ դասի հարցման, ամփոփման միջոցով, հատկապես, երբ նոր դասը հնի շարունակությունն է:
2. Բացահայտել նոր նյութի վերաբերյալ սովորողների գիտելիքները:
3. Ակտիվացնել աշակերտներին՝ ներգրավելով նրանց քննարկվելիք նյութի մեջ:
4. Աշակերտների մոտ ձևավորել գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում:
Դասի նախապատրաստական մասը պետք է սկսել կազմակերպչական հարցերի լուծումով, տնային աշխատանքների վերաբերյալ անհրաժեշտ պարզաբանումներով,նոր դասի թեման և նպատակը հաղորդելով:
Մեթոդներ,որոնք հարմար են կիրառել խթանման փուլում՝
1. Մտագրոհ

2. Խմբավորում
3. Պրիզմա
4. Մտածիր՛-- զույգ կազմիր՛ -- քննարկիր՛
5. Հինգրոպեանոց ազատ շարադրանք
6. ԳՈՒՍ աղյուսակի առաջին և երկրորդ սյունակները
7. Ուղղորդված ընթերցանության առաջին քայլը:
Իմաստի ընկալման փուլի հիմնական նպատակներից են՝
1. Սովորողների մոտ հետաքրքրության աճի պահպանումը
2. Տեղեկատվության ընկալման ինքնավերահսկման ապահովումը
3. Նոր և հին տեղեկատվության շաղկապումը և իմացության նոր կառույցի ստողծումը
Մեթոդներ և մեթոդական հնարներ, որոնք հարմար են կիրառել իմաստի ընկալման փուլում.
1. Т-աձև աղյուսակ
2. Գաղափարների քարտեզագրում
3. Վենի դիագրամ
4. Փոխգործուն նշանների համակարգ
5. Բանավեճ
6. Զրույց
7. Համառոտ դասախոսություն
8. Կարուսել
9. Ապագայի անիվ
10. Խորանարդում
11. Խճանկար
12. Ուղղորդված ընթերցանություն
13. Ընդհատված դասախոսություն
14. Կրկնակի գրառումների օրագիր
15. Շրջագայություն պատկերասրահում և այլն
Կշռադատման փուլի նպատակներից են՝
1. Սովորողները նոր ստացած տեղեկատվությունը կարողանան արտահայտել իրենց բառերով և ձևակերպումներով
2. Նոր գիտելիքների միաձուլում ունեցածին և դրանց աստիճանական ինտեգրացում
Մեթոդներ, որոնք հարմար են կիրառել կշռադատման փուլում.
1. Քառաբաժան
2. Խորանարդում
3. Երեք բանալի, մեկ կողպեք
Բոլոր փուլերի համար էլ գոյություն ունեցող մեթոդները բազմաթիվ ու բազմազան են, որոնցից որոշներն են, որոնք նկարագրվեցին և առաջարկվեցին կիրառել դասի որոշակի փուլերի համար:Ընտրությունը կախված է դասավանդվող առարկայից,դասի նպատակից, տրամադրված ժամանակից: Այս մեթոդներից շատերը կարող են կիրառվել մեկ դասաժամի ընթացքում,սակայն որոշները կարելի է երկարացնել՝հանձնարարելով տնային աշխատանք: Դասի պլանը գրելիս պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել ժամաբաշխման վրա, որի ճիշտ բաշխումը և նրան հետևելը ամբողջ պլանավորած գործընթացի իրականացման և բարձր արդյունավետության երաշխիքն

է:Յուրաքանչյուր դասի պլանավորում ենթադրում է ստեղծագործ և լուրջ աշխատանք,որի արդյունքում ուսուցիչը գտնում և մշակում է այն ձևերն ու հնարները , որոնք տա-նում են դեպի դասի նպատակների իրականացում:Դասից հետո անհրաժշտ է վերլուծել կատարված աշխատանքը և պարզել, թե՝

• Ուսուցիչը հասավ արդյոք դասի նպատակին
• Արդյոք իրականացան դասի նպատակներին հասնելու ակնկալիքները և ինչ չափով
• Ճիշտ են արդյոք ընտրված մեթոդները
• Ժամանակի բաշխումը որքանով է իրատեսական
• Ինչը կարելի էր ավելի ճիշտ կազմակերպել և ինչպես:

Այսպիսով՝ ինչ է ԽԻԿ-ը.
Խթանում- Ինչպես է պետք ուղղորդել աշակերտներին ուսումնական հարցերն ու նպատակները ձևավորելու համար:
Իմաստավորում-Ինչպես պետք է աշակերտները հետազոտեն նյութի բովանդակությունը
Կշռադատում-Ինչպես պետք է աշակերտները օգտագործեն դասի ընթացքում յուրացրած նյութը:
Համաշխարհային արդի զարգացումներն իրենց անմիջական ներգործությունն ունեն կրթական համակարգի վրա՝առաջադրելով տարատեսակ խնդիրներ և փոփոխություններ:Կրթության բնագավառի փոփոխությունները ենթադրում են ուսուցման նոր մոտեցումների և մեթոդների ներդրում, որոնք նպատակ ունեն սովորողների մեջ ձևավորել ուսման նկատմամբ դրական վերաբերմունք և ապահովում են սովորողների ակտիվ մասնակցությունն ուսումնական գործընթացին:Եթե նախկինում ուսուցման ընթացքում շեշտը դրվում էր գիտելիքների յուրացման և պարզ վերարտադրության վրա,ապա այսօր առավել կարևորվում է գիտելիքի մշակման ,յուրացման և կիրառման գործնական հմտությունների ձեռքբերման կարողությունների զարգացումը:Ներկայացվե-լիք մեթոդների և մոտեցումների հիմքում ընկած է աշակերտակենտրոն ուսուցումը, որտեղ գիտելիք-ները, կարողություններըն ու հմտությունները ձեռք են բերվում սովորողների անմիջական ակտիվ մասնակցությամբ , իսկ ուսուցիչը կազմակերպում և ուղղորդում է այդ գործընթացը: Նոր մոտեցում-ներն առաջնորդվում են մի կարևոր սկզբունքով՝սովորել կատարելով, սովորել՝ սովորեցնելով: Ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպման մեջ խիստ կարևոր նշանակություն ունի մե-թոդների ճիշտ ընտրությունը:

Մտքերի տարափ կամ մտագրոհ (անգլ.՝ brainstorming), խմբային (թիմային) աշխատանքի պարզագույն, բայց շատ արդյունավետ մեթոդ է: Մեթոդի այս տեսակն անվանում են «մտքերի տարափ» , քանի որ հաճախ խրախուսվում են պարզապես ուսումնասիրվող նյութին այս կամ այն կերպ առնչվող բառեր թվարկելն ու գաղափարներ արտահայտելը: Մեթոդը ստեղծվել է գովազդային պատասխանատու Ալեքս Ֆ. Օքսորնի կողմից 1939 թվականին:

Մտագրոհի մեթոդը արդյունավետ է գործածել ցանկացած առարկայի դասի խթանման փուլում, ինչպես նաև՝

- որոշումներ կայացնելու,

- կոնկրետ խնդիր լուծելու,
- ստեղծագործական մտածողությունը խթանելու,
- երևակայությունը զարգացնելու,
- լսելու հմտություններ ձևավորելու,
- համագործակցային թիմ ձևավորելու,
- համարձակություն, ինքնավստահություն ներշնչելու համար:

Դասապրոցեսում մտագրոհի մեթոդը կիրառվում է մտքերի, գաղափարների, տեսակետների ազատ և անսահմանափակ արտահայտման համար: Այս մեթոդի շնորհիվ վեր են հանվում աշակերտների նախնական գիտելիքները, այն, ինչ նրանք գիտեն կամ ենթադրում են, որ գիտեն տվյալ թեմայի, նյութի վերաբերբալ: Դասի վերջում (կշռադատման փուլում), երբ արդեն աշակերտները ծանոթացել կամ յուրացրել են թեման, նյութը, անպայման անդրադարձ է կատարվում մտագրոհի արդյունքներին՝ ճշգրտելով, ուղղելով, լրացնելով, ամբողջացնելով նախնական մտքերի ու գաղափարների ցանկը: Միայն այս դեպքում է, որ աշակերտի իմացական կառույցներում տեղաշարժ է կատարվում: Ինֆորմացիան ներառվում է որպես նոր գիտելիք:

Անհատական մտագրոհը դա մտքերի տարափի օգտագործումն է միայնակ իրավիճակներում: Այն սովորաբար ներառում է այնպիսի տեխնիկաներ, ինչպիսիք են՝ ազատ շարադրանքը, բանավոր խոսքը, բառապաշարի հարստացումը և մտքի քարտեզագրումը: Անհատական մտագրոհը օգտակար մեթոդ է ստեղծագործական շարադրանքի ժամանակ և ավելի արդյունավետ է, քան ավանդական խմբային մտագրոհը: Մի շարք հետազոտություններ հերքում են Օբսորնի այն պնդումը, որ խմբային մտագրոհը կարող է ավելի շատ գաղափարներ ծնել, քան անհատական մտագրոհը:

Քառաբաժան մեթոդ կամ Ֆրայերի մոդել



Սա շատ արդյունավետ գործիք է սովորածը պարզելու համար: Ուսուցիչը քառաբաժանի կենտրոնում գրում է հասկացության, երևույթի, առարկայի անունը, ապա՝ առաջարկում

վերևի ձախ անկյունում գրել հասկացության սահմանումը, վերևի աջ անկյունում այդ հասկացության պատկերային արտահայտությունը: Դա կարող է լինել ձեռքով նկարած պատկեր, լուսանկար, գծապատկեր, աղյուսակ: Ներքևի ձախ անկյունում գրե՛լ օրինակներ, որոնք վերաբերում են այն հասկացությանը, ներքևի աջ անկյունում՝ օրինակներ, որոնք չեն վերաբերում այդ հասկացությանը:

Աշակերտները բաժանվում են 4-5 հոգանոց խմբերի: Խմբերը պատասխանում են հարցերին, ապա յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր պատասխանները:

Խճանկար մեթոդ

«Խճանկար կամ Ջիգսո» մեթոդը համագործակցային ուսուցման մեթոդ է, որի կիրառության ժամանակ աշակերտները խորամուխ են լինում ուսումնական նյութի որոշակի հատվածի, որոշակի դրույթների և որոշակի հիմնախնդիրների մեջ և դրանք ուսուցանում իրենց դասընկերներին: Այս մեթոդի կիրառման ժամանակ աշակերտները համագործակցային խմբերով միևնույն թեմայի շուրջ աշխատում են առանձին ուղղություններով: Բոլոր խմբերի գործունեության արդյունքները միավորվում են և դառնում են ողջ դասարանի սեփականությունը: Այսպիսով՝ նյութն ուսումնասիրվում է հատվածաբար կամ տարբեր կողմերից, ապա պատկերն ամբողջանում է, երբ միավորվում են խմբային աշխատանքների արդյունքները: Մեթոդին բնորոշ հատկություններից է այն, որ սովորողները մեծ պատասխանատվություն են կրում միմյանց ուսումնառության համար, հանդես են գալիս և սովորողի, և սովորեցնողի դերերում:

«Խճանկար»-1

1. Թեման բաժանել առանձին ամբողջական մասերի, հատվածների: Կարևոր է հաշվի առնել աշխատանքը կատարող աշակերտների գիտելիքները և, եթե անհրաժեշտ է, ընտրել տարբեր բարդության ու հագեցվածության հատվածներ:

2. Ստեղծել չորս-հինգ հոգուց բաղկացած համագործակցային խմբեր (նպատակային խմբեր ձևավորելիս հնարավորության դեպքում հաշվի առնել սովորողների հետաքրքրություններն ու ցանկությունները):

3. Համագործակցային խմբերում մասնակիցներին համարներ են տրվում(1,2,3,4...):

4. Նույն համարները կրող մասնակիցները միավորվում են նոր՝ փորձագիտական խմբերում (1.1,1...; 2.2,2... և այլն): Յուրաքանչյուր փորձագիտական խմբի տրվում է առանձին առաջադրանք (օրինակ՝ եթե նյութը հատվածների է բաժանվել, փորձագետների 1-ին խումբը կաշխատի նյութի առաջին հատվածի վրա, 2-րդ խումբը՝ երկրորդի և այլն):

Խմբային աշխատանքների ընթացքը կախված է հատվածի, նյութի կամ ուսումնասիրվող ոլորտի առանձնահատկություններից: Առանձին դեպքերում սովորողներն իրենք կարող են մշակել իրենց խմբի աշխատանքային պլանը: Իսկ սա իր

հերթին պայմանավորված է նրանով, թե «Խճանկար» մեթոդը դասի ընթացքում կամ ուսուցման մեջ ինչ տևողությամբ է կիրառվում:

- Առաջադրանքը կատարելիս աշակերտները կարող են դասագրքի տրված գլխից տարբեր հատվածներ, նույն թեմայի վերաբերյալ տարբեր կարճ պատմություններ կամ նույն հեղինակի այլ պատմվածքները կարդալ:
- Հանձնարարված թեմայի սահմաններում կարող են հետազոտել ուշադրության արժանի տարբեր ոլորտներ, օրինակ՝ էկոլոգիական խնդիրներ ուսումնասիրելիս կարող են քննել Օզոնային շերտի քայքայման ազդեցությունը բույսերի վրա, եղանակի կտրուկ փոփոխությունների հետևանքները, բնական պաշարների սպառման, մարդկանց առողջության պահպանման հարցերը:
- Առանձին հետազոտությունների առարկա կարող են դառնալ ժամանակակից մոտեցումները տվյալ հարցի վերաբերյալ:
- Աշակերտները կարող են այս մեթոդը կիրառել նաև ինքնուրույն բնագիտական հետազոտական նախագծեր իրականացնելու համար: Այս դեպքում յուրաքանչյուր խումբ կամ առանձին մասնակից պատասխանատվություն է կրում կոնկրետ ոլորտի ուսումնասիրման համար:

5. Մեթոդի ամփոփիչ քայլն այն է, որ աշակերտները վերադառնում են համագործակցային խմբեր և հաշվետվություն են տալիս խմբին իրենց փորձագիտական խմբի ուսումնասիրած նյութի մասին՝ հանդես գալով նաև ուսուցանողի, սովորեցնողի դերում.

- ներկայացվում են խմբային քննարկումների, աշխատանքների արդյունքները,
- աշակերտները իրենց սովորածը սովորեցնում են միմյանց,
- միավորվում, ամբողջանում են գիտելիքները:

6. Ամփոփիչ փուլը առաջանում է, երբ համագործակցային խմբերը 2-3 րոպեի ընթացքում ամբողջ դասարանին իրենց նախընտրած ձևով ներկայացնում են թեման:

Ուսուցիչը թեմայի ամփոփման տարբեր հանձնարարություններ կարող է տալ («Ո՞րն էր ամենակարևորը», «Համառոտ ձևակերպե՛ք թեմայի գլխավոր գաղափարը», «Ինչի՞ վրա խումբն առավելագույն ուշադրություն դարձրեց»...):

Այս քայլը հնարավորություն է տալիս միևնույն նյութն ամփոփել և գնահատել տարբեր տեսանկյուններից և մի քանի անգամ:

«Խճանկար»-2

Մեթոդի նկարագրությունը[

1. Աշակերտները աշխատում են 4 հոգանոց թիմերով (համագործակցային խմբերով): Խմբի անդամներին տրվում են տարբեր փորձագիտական թերթիկներ: Փորձագիտական թերթիկներում զետեղված հարցերը նպատակ ունեն ուղղորդելու տվյալ աշակերտի ընթերցանությունը: Թերթիկները տարբեր են, քանի որ հետագայում տարբերվելու են աշակերտների պարտականությունները: Նրանք օգնելու են հիմնական խմբին՝ համակողմանի յուրացնելու իրենց վստահված և փորձագիտական թերթիկում նշված հատվածը:

2. Աշակերտներին տրվում է որոշակի ժամանակ՝ ամբողջ նյութը կարդալու համար։ Բոլորը պետք է նյութը կարդան ամբողջությամբ՝ հատուկ ուշադրություն դարձնելով այն հատվածներին, որոնք պատասխանում են իրենց փորձագիտական թերթիկում նշված հարցերին և համապատասխան գրառումներ անեն:

3. Աշակերտները վերախմբավորվում են ըստ թերթիկների՝ կազմելով փորձագիտական խմբեր, որտեղ նրանք քննարկում են թերթիկում նշված հարցերը։ Յուրաքանչյուր խմբում ընտրվում է քննարկումը վարող անձ։ Ուսուցիչն այդ ընթացքում շրջում է խմբերում որպես մասնակից, անհրաժեշտության դեպքում պարզաբանումներ անում:

4. Փորձագետները վերադառնում են իրենց նախնական համագործակցային խմբերը և ընկերներին սովորոցնում փորձագիտական խմբում յուրացրածը։ Փորձագետները ոչ միայն զեկուցում, այլև պատասխանում են հարցերին և հավաստիացնում, որ բոլորը յուրացրել են տվյալ հատվածը:

5.Վերջին քայլը գնահատումն է։ Ուսուցիչը կարող է առաջարկել աշակերտներին գրավոր նշել, թե ինչ ներդրում են իրենք ունեցել խմբի ընդհանուր աշխատանքում:

Մեթոդը կիրառման լայն հնարավորություններ ունի։ Այն հավասարապես կարող է օգտագործվել բոլոր առարկաների դասերին։ Առավել նպատակահարմար է կիրառել հատկապես ծավալուն, փաստերով ու տվյալներով հագեցած նյութերի վրա աշխատելիս։ «Խճանկարը» հիմնականում դասի իմաստի ընկալման փուլի մեթոդ է, որը, սակայն, ներառում է նաև կշռադատման փուլը:

Մեթոդի առավելությունները Նյութի բազմակողմանի և ավելի խոր ուսումնասիրություն,

- խմբային աշխատանքը հեշտացնում է նյութի ընկալումը,
- աշակերտը հանդես է գալիս և՛ սովորողի, և՛ սովորոցնողի դերում, որն էլ ստիպում է լինել ուշադիր և պատասխանատու,
- ժամանակի ճիշտ և արդյունավետ օգտագործում,
- հաշվետու լինելու կարողության և անձնական պատասխանատվության ձևավորում,
- նյութը ներկայացվում է բազմապիսի ձևերով, ինչն էլ ընկալման ու կրկնության բազմաթիվ հնարավորություններ է ընձեռնում,
- մոտիվացիա և հետաքրքրությունների բավարարում,
- նոր նյութի յուրացում:

- անհրաժեշտ ռեսուրսների ոչ բավարար քանակ,

- հետաքրքրությունների, աշխատանքի ծավալի և ժամանակի անհամապատասխանություն:

Խորանարդում

Խորանարդումդ կշռադատման փուլում կիրառվող մեթոդներից է, որ աշակերտին մղում է պատասխանելու թեմային առնչվող վեց տարբեր հարցերի, որոնք սկսում են պարզից և աստիճանաբար բարդանում:

Այս մեթոդի համար օգտագործվում է խորանարդ երկրաչափական մարմինը: Խորանարդը կարող է պատրաստված լինի թղթից, ստվարաթղթից: Նրա կողի երկարությունը նպատակահարմար է, որ լինի 15-20 սմ: Ուսուցիչն աշակերտներին

բաժանում է փոքր խմբերի, տափս է թեմայի հետ կապված որևէ առարկա կամ հասկացություն (ցանկալի է, որ յուրաքանչյուր խմբի տրվի տարբեր առարկա կամ հասկացություն) և խորանարդ, որի 6 նիստերից յուրաքանչյուրի վրա գրված են հետևյալ առաջադրանքները:

Նկարագրիր այն (ինչ տեսնում ես՝ գույները, ձևերը չափսերը): Համեմատիր այն (ինչի՞ է նման, ինչի՞ց է տարբեր):

Ինչի՞ մասին է այն ստիպում քեզ մտածել: (Մտքումդ ի՞նչ է ծագում, դրանք կարող են նման և տարբեր բաներ փնել):

Ինչի՞ց է այն բաղկացած (կամ պատրաստված):

Ինչպե՞ս կարող ես օգտագործել այն:

Այն լա՞վն է, թե՞ վատը:

Խմբերին առաջարկվում է ուշադիր դիտել առարկան կամ մտածել տրված հասկացության մասին և իրար հետ համագործակցելով՝ գրավոր պատասխանել խորանարդի նիստերի վրա գրված 6 առաջադրանքներին (լավ կլինի նիստերը համարակալել, որ պատասխանելիս աշակերտները հեշտից գնան դեպի բարդը): Խմբերն ազատ շարադրում են իրենց մտքերը: Գրավոր հատվածն ավարտելուց հետո իրար են ներկայացնում իրենց կատարածը: Անհրաժեշտության դեպքում մյուս խմբերի անդամները կարող են շտկումներ, լրացումներ կատարել կամ հարցեր տար գնահատել կատարածը՝ պարզաբանելով, թե ինչը դուր եկավ և ինչու: Խորանարդման մեթոդը կիրառելի է ծանոթ թեմայի դեպքում, թիրախ առարկան կամ հասկացությունը զգուշորեն պետք է ընտրել:

Այս մեթոդի կիրառումը շատ օգտակար է կշռադատման փուլում: Այն օգնում է, որ աշակերտը կարողանա առարկան, հասկացությունը դիտել տարբեր տեսանկյուններից:

Երաժշտական դասավանդման մեթոդները նախապայման են ստեղծում երաժշտությամբ հրապուրվելու համար, դրանով իսկ ակտիվացնելով երաժշտության ընկալումը, ստեղծելով համապատասխան ստեղծագործական մթնոլորտ, որի ներքո ուսոցման և դաստիարակության գործընթացը դառնում է հետաքրքրական, հուզական, հրապուրիչ և հասկանալի:[2.40]

Ճիշտ է նախապայմանը ստեղծվում է, բայց եթե չկա սեր աշակերտի և աշխատանքի նկատմամբ, միևնույնն է ոչինչ չի ստացվի:

Եվ վերջում ուզում եմ ավարտել մեծն Կոմիտասի խոսքերով՝

,, ՈՒՍՈՒՑԻՉ ՊԱՐՈՆՆԵՐԸ ՔՈՒՅՐԵՐ՝ ԶԳՈՒՇՈՒԹՅԱՄԲ և ԵՐԿՅՈՒՂԱԾՈՒԹՅԱՄԲ ՄՈՏԵՑԵՔ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՆ՝ ԽԻՍ ՓԱՓՈՒԿ ՊԱՇՏՈՆՄԸՆ Ե ՁԵՐԸ:

ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼՈՒ ԿՈՉՎԱԾ ԵՔ ՍԵՐՈՒՆԴ ՄԸ,ՎՈՐ ԱՊԱԳԱԱ ԱԶԳ Է: ՍԽԱԼ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԱԶԳ ՄԸ ԿԽՈՐՏԱԿԵՔ ՎԵՐՋԸ: [4.67]

Օրինակելի դասի պլան

Երկրորդ դասարան

Դասի թեման՝ երգեր դպրոցի մասի

Երգեցեղություն ,,Դպրոցի ճամփան,, Երաժշտություն՝Ռ.Ալթունյան

Ունկնդրում՝ առաջին դասարանում ուսուցանված երգեր

Նպատակը՝ զարգացնել երգը ճիշտ շնչառությամբ և առոգանությամբ երգելու հմտությունը

Դասի ընթացքը՝ դասը սկսել ,,Ողջույն դպրոց,, երգով

Խթանման փուլում մտագրոհի միջոցով ստուգել գիտելիքները

Իմաստի ընկալման փուլում ունկնդրել ուսուցանվող երգը, բացատրել բառերը, հարցերի միջոցով պարզել երգի բնույթը, իմաստը, ուսուցանել ֆրազներով:

Կշռադատման փուլում երգը կատարել ամբողջական:

Դասի ավարտին կազմակերպե ,,Ռիթմով գուշակիիր խաղը,,

Հինգերորդ դասարան

Դասի թեման՝ ,,Երաժշտություն և գրականություն,,

Երգեցեղություն ,,Կաքավի երգը,, Երաժշտություն՝Կոմիտաս

Ունկնդրում՝ կաքավի երգը ,,Կոմիտասի լարային քառյակի կատարմամբ,,

Նպատակը՝ զարգացնել երգը ճիշտ շնչառությամբ և առոգանությամբ երգելու հմտությունը, ծանոթացնել քառյակ բառի բացատրությանը, լարային քառյակի ստեղծման պատմությանը

Դասի ընթացքը՝

Խթանման փուլում կազմակերպել մտագրոհ ,,Արվեստ,, թեմայով



կինո

Իմաստի ընկալման փուլում պատմել երաժշտության և գրականության փոխկապվածության մասին, ունկնդրել,,Կաքավի երգը,, լարային քառյակի կատարմամբ, այնուհետև երգչախմբի կատարմամբ, համեմատել կատարումները, ծանոթացնել բառերին, ուսուցանել ֆրազներով:

Կշռադատման փուլում երգը կատարել ամբողջական, նշումներ կատարել աշխատանքային տետրում

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ,,Երաժշտությունը առաջինից չորրորդ դասարաններում,, 2001թիվ
2. ,, Երաժշտություն առարկայի հանրակրթությն դպրոցի չափորոշիչ և ծրագիր,, 2007թիվ
3. Երաժշտամանկավարժական տեխնոլոգիաներ Ուսումնամեթոդական ձեռնարկ
4. Հոդվածներ և ուսումնասիրություններ 1941թիվ